

---

---

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ Ս. Ռ.

*XVII դարում հասունացել էր հայոց ազատագրության խնդիրը: Այլևս անհնար էր ազգային գոյությունը պահպանել օտարների՝ Սեֆյան Իրանի ու Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ:*

*Ուշ միջնադարյան Հայաստանում, երբ հանուր հայությունը պետք է ամենավճռական պայքարի ելներ իր ազգային ինքնության պահպանման և միասնական պետականության վերստեղծման համար, էական դերակատարություն ունեցավ Արցախ աշխարհը: Եվ դա պատահական չէր: Արցախում դեռևս պահպանվել էին հայ մելիքությունները՝ իրենց տեղական ինքնավարությամբ և զինված ուժերով: Հայ ականավոր պատմաբան, արձակագիր, հրապարակախոս Լեոն գրում է. «...Ղարաբաղի լեռնաստանում էր, որ ծնվեց և զույս բարձրացրեց հայրենիքի ազատագրության գործը, այս բնական էր, նա չէր կարող ոչ ծնվել, ոչ էլ սնվել այնպիսի մի տեղ, ուր չկար հայ ազնվականություն, իբրև իշխանության կազմակերպված ուժ և իբրև ռազմիկ տարրերի առաջնորդ: Ղարաբաղն էր, որ ուներ այդ բոլորը: Ղարաբաղն էլ կարող էր դառնալ հայոց ազատագրության պատմության օրորոց»<sup>1</sup>: Արցախի մելիքությունները չափազանց կարևոր տեղ էին գրավում Անդրկովկասի՝ դեռևս ֆեոդալական հասարակարգում գտնվող ժողովուրդների ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում: Նրանց հետ հաշվի էին նստում ոչ միայն ներքին, այլև արտաքին ուժերը: Արցախը՝ Գանձասարի հոգևոր կենտրոնով, արդեն մեծ փորձ ուներ Հայաստանի արտաքին կապերի ձևավորման գործում՝ սկսած Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի (1214-1261 թթ.) ժամանակներից՝*

*XVII դ. վերջում քաղաքական ասպարեզ է իջնում ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի և ազատագրական պայքարի ամենակարկառուն դեմքը՝ Առանշահիկների թագավորական տոհմի ժառանգ, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը (1701-1728)<sup>2</sup>: Հենց այս ժամանակ էլ Պոռչյան իշխանական տոհմի ժառանգը՝ Բարայել Օրին (1658-1711)<sup>3</sup>,*

---

<sup>1</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գ. II, Ե., 1973, էջ 27:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Ե., 1982, էջ 203-204:

<sup>3</sup> Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտական, պրակ երրորդ (1652-1731), կազմեց Ք. Կոստիկյան, Ե., 2005, էջ 149-152: Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1982, էջ 64:

<sup>4</sup> Կաթողիկոս Յովսեփեան Գ., Խաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 143-146:

1680-1690-ական թվականներին եվրոպական մեծ տերությունների կառավարությունների հետ շփվելով, XVIII դ. արշալույսին էլ լինելով Ռուսաստանում, համոզվել էր, որ միայն Ռուսաստանի հետ կարելի է կապել հայոց ազատագրության խնդիրը և, շտապելով հայրենիք՝ տեղի աշխարհիկ ու հոգևոր առաջնորդներին վարակեց իր տրամադրությամբ, նրանց դարձրեց քաղաքական-դիվանագիտական հեղափոխիչ մի ծրագրի զինվորները, որ պիտի կոչվեր հայ ժողովրդի ռուսական կողմնորոշում:

Իսրայել Օրու գործի ու գաղափարի ամենաջերմ պաշտպանն էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը:

1701 թ. նստելով Գանձասարի կաթողիկոսական գահին՝ նա Գանձասարը դարձնում է ազատագրական շարժման քաղաքական կենտրոնը՝ Արցախի հոգևոր ու աշխարհիկ տերերի հավաքատեղին, իշխողների մի խորհրդարան, որտեղ դիվանագիտական հարաբերություններ ու ռազմական ծրագրեր էին քննարկվում ու մշակվում:

Ոգևորվելով Պետրոս I-ի (1689-1725) խոստումներից՝ 1702 թ. գարնանը Իսրայել Օրին և նրա զինակից Մինաս վարդապետը Մոսկվայում ապրող հայ զինվորական Միրոն Վասիլևի միջոցով նամակներ են ուղարկում Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին՝ Արցախի մելիքներին հայտնելով իրենց բանակցությունների հաջող արդյունքների մասին, հանձնարարում նախապատրաստվել և սպասել իրենց<sup>5</sup>: Մակայն նախքան պարսկական արշավանքը սկսելը, Պետրոս I-ը անհրաժեշտ էր համարում ուսումնասիրել իրադրությունն Արևելյան Անդրկովկասում և Պարսկաստանում: Օրին հանձն է առնում գլխավորել այդ առաքելությունը: 1707 թ. հուլիսին նրա գլխավորած 50 հոգանոց դեսպանությունը Մոսկվայից ուղևորվում է Սպահան<sup>6</sup>: Պարսկաստանի շահ Հուսեյն I-ը (1694-1722)<sup>7</sup> ռուսաց թագավորի բանագնաց Իսրայել Օրուն առերես ընդունում է պատշաճ ձևականությամբ և պատվով, բայց խիստ հսկողության տակ է պահում և աշխատում որքան կարելի է շուտ ճանապարհել: Դեռևս մինչ Սպահան ժամանելը ֆրանսիական դիվանագետներն ու միսիոներները լուրեր էին տարածել, թե Օրու միսիան քաղաքական նպատակներ է հետապնդում. նա ձգտում է Ռուսաստանի օգնությամբ վերականգնել հայկական թագավորությունը և ինքն էլ դառնալ թագավոր<sup>8</sup>:

Ավարտելով իր դեսպանական առաքելությունը՝ 1709 թ. օգոստոսի կեսերին Օրին Սպահանից վերադառնում է Շամախի և շուրջ մեկ տարի մնում Անդրկովկասում: Նա լինում է Արցախում, տեսակցություններ ու գրույցներ ունենում Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի, մելիքների հետ: Արցախում մեծ

<sup>5</sup> Պարսական Վ., Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Ե., 1978, էջ 11:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>7</sup> Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտականք, պր. III, էջ 9:

<sup>8</sup> Պարսական Վ., նշվ. աշխ., էջ 13-14:

նզևորություն է առաջացնում շվեդների նկատմամբ 1709 թ. հունիսի 27-ին Պոլտավա քաղաքի մոտ ռուսական զորքի հաղթանակի մասին Բարայել Օրու հայտնած լուրը:

Եսայի Հասան-Ջալալյանը՝ որպես Արցախի կաթողիկոս և ազատագրական շարժման ղեկավար, Օրուն ցույց է տալիս բարձր մակարդակի ընդունելություն: Հայ ժողովրդի Առանշահիկ երկու զավակները, այդ երկու մեծ հայրենասերները, շրջագայելով Շիրվանում, Արցախի ու Պարսկաստանի հայաբնակ շրջաններում, ժողովրդի մեջ քարոզում են Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու գաղափարը, ոգեշնչում ու պայքարի են հանում նրանց:

Ավարտելով իր առաքելությունը՝ Բարայել Օրին պատրաստվում էր վերադառնալ Մոսկվա և Պետրոս I-ին հաղորդել իր դեսպանության արդյունքները: Խանդավառված ազատագրական գաղափարներով՝ Եսայի Հասան-Ջալալյանն՝ իբրև հոգևոր գերագույն առաջնորդ և աշխարհիկ իշխանությունների լիիրավ պատգամախոս, իր երկու եպիսկոպոսների հետ միանում է Բարայել Օրու պատվիրակությանը՝ ռուսաց ցարին անձամբ հանդիպելու, հայոց ազատագրությանն առնչվող խնդիրների վերաբերյալ հստակ պայմանավորվածությունն ձեռք բերելու նպատակով<sup>9</sup>: Պետրոս I-ի հանձնարարությամբ Օրին Արցախից Ռուսաստան էր տանում 70 հայ մետաքսագործ ընտանիքներ և մեծ քանակությամբ հում մետաքս՝ Մոսկվայում մետաքսի գործարան հիմնելու համար, տանում էր նաև արցախյան 25 ընտիր ձիեր և թանկարժեք նվերներ: Ռուսական իշխանություններից Օրին ակնկալում էր չորս նավ՝ դեսպանության և ապրանքների փոխադրման համար, բայց ստանում է միայն երեքը՝ երկու առազաստանավ և մեկ խարխուլ ձկնորսանավ: Փաստորեն, իրականում Օրու տրամադրության տակ եղել է երեք նավ, որոնցով նա անկարող էր տեղափոխել իր մոտ եղած մեծաքանակ գույքն ու մարդկանց: Այդ պատճառով էլ նա ձիերը, հարկադրված, Շամախու խանի թույլտվությամբ, ուղարկում է ցամաքային ճանապարհով, իսկ 70 մետաքսագործ ընտանիքներից վերցնում է միայն 20-ին: Առազաստանավերում տեղավորում է իր շքախմբի անդամներին ու ապրանքների մի մասը, իսկ ինքը Եսայի Հասան-Ջալալյանի ու վերջինիս ուղեկցող երկու եպիսկոպոսների հետ նստում է ձկնորսանավը և ճանապարհ ընկնում 1710 թ. օգոստոսի կեսերին<sup>10</sup>: Նավերից մեկը հաջողությամբ հասնում է Սստրախան, իսկ մյուսը՝ ձկնորսանավը, որի մեջ էին Օրին ու Եսայի կաթողիկոսը, նավահանգստից քիչ հեռացած, ենթարկվում է ալեկոծության, ծակվում է և լցվում ջրով: Մեծ դժվարությամբ է հնարավոր լինում փրկել մարդկանց, իսկ նավում եղած ապրանքների մեծ մասը ջրասույզ է լինում: Բարայել Օրին ու Եսայի կաթողիկոսը ստիպված էին ձմեռել Նիզովո գյուղում<sup>11</sup>:

<sup>9</sup> Աբրահամյան Ա., Բարայել Օրի, Ե., 1978, էջ 113:

<sup>10</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов под ред. А. Иоаннисяна, т. II, ч. I (այսուհետև՝ АРО, т. II, ч. I), Е., 1964, с. 292-294.

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 304:

1711 թ. ամռանը նրանք մեծ դժվարությամբ հասնում են Աստրախան, բայց այստեղ էլ տեղական իշխանություններն են հետապնդում Օրոն, պատճառաբանելով, թե առանց մաքս վճարելու մեծ քանակությամբ արտասահմանյան ապրանքներ է տանում, և դրանք բռնագրավում են, մի մասն էլ կողոպտում: Այս ամենի հետևանքով դեսպանության անդամների մեջ դժգոհություններ են ծագում, Օրին ջանքեր է գործադրում դրությունը կարգավորելու համար: Այս լարված իրադրության պայմաններում էլ Աստրախանում, ուժերի ծաղկման շրջանում՝ մոտավորապես 50 տարեկան հասակում հանկարծամահ է լինում հայ ժողովրդի նվիրյալ գավակը: Եսայի կաթողիկոսը, Աստրախանի հայկական եկեղեցու բակում կատարելով Իսրայել Օրու թաղման կարգը, ձեռնունայն վերադառնում է Արցախ<sup>12</sup>:

Գանձասարում Եսայի կաթողիկոսը Արցախի ու հարևան հայկական մարզերի և գավառների բոլոր ուժերը նախապատրաստում է ինքնապաշտպանության: Նա ինքնապաշտպանական ուժերի առաջնորդն էր ու ոգին, ամենքին համոզել էր, որ հայությունը պիտի տա իր ամենաճակատագրական կոիվը: Ցանկանալով Գանձասարը դարձնել ազատագրական պայքարի ռազմաքաղաքական կենտրոն՝ Եսայի կաթողիկոսը 1714 թ. Գանձասարի վանքում Արցախի հինգ մելիքների մասնակցությամբ գումարում է գաղտնի ժողով: Ժողովը, երկար ու բուռն քննարկելով հայ ժողովրդի ներկա վիճակը, իրական գնահատական տալով հայության առջև ծառայած մարտահրավերներին, ընդունում է 23 կետից բաղկացած մի կանոնադրություն, որը պետք է ուղեցույց դառնար արցախահայության կյանքի կազմակերպման համար: Այդ կանոններից էին, մասնավորապես՝

ԺԱ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է գահերէց ճանաչել Ջալալեան (ճիշտն ու ամբողջականը՝ Հասան-Ջալալյան – Հ-Ջ. Ս.) մելիքները եւ թէ՛ յայտնի եւ թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունիլ Գանձասարի վանքը: Ամէն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամէն գնդապետ իւր զօրավարին եւ ամէն զօրական իւր գնդապետին եւն:

ԺԲ. Իւրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ եւ պատրաստութիւններ:

ԺԳ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, եւ եթէ վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին:

ԺԵ. Ամէն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ եւ միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների եւ գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

<sup>12</sup> Эзов Г. Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, с. 315-316.

ԺԷ. Հայրենեաց եւ կրօնի դէմ դաւաճանութիւն եւ ծանր յանցանք գործողն, թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական եւ թէ՛ ժողովրդական, կը պատժուի կրօնական եւ մելիքական խառն ժողովոյ որոշած պատժով:

ԺԸ. Ո՛չ այլազգի իշխանաւորաց հետ խնամութիւն հաստատել եւ ո՛չ երկպառակութեամբ նոցա յարիլ:

ԺԹ. Եթէ օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի՝ կրօնական եւ աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները եւ պահանջները:

Ի. Բւրաքանչիւր մելիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել եւ իւր գաւառի շահերը իւր անձնական շահերից եւ օգուտներից:

ԻԲ. Ամէն մելիք պարտաւոր է գտնուիլ իւր զօրաց գլխին պատերազմի ժամանակ եւ խրախուսել քաջասրտութեամբ իւր զօրքը եւ զօրավարը: Բացառութիւն է հիւանդութեան բանաւոր պատճառն:

ԻԳ. Մեզանից ով որ կը յանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց եւ կրօնի թշնամու կողմն անցնի, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայր հայի դէմ թշնամի յարուցանել եւ արինահեղութիւն պատճառել՝ այնպիսին մահուան պատժով կը պատժուի, միւս մելիքներն կը զրաւեն նորա բերդը եւ ինչքը ցնոր տնօրէնութիւն...»<sup>13</sup>:

Ժողովի վերջում Եսայի կաթողիկոսն ու մելիքները ստորագրում են կանոնադրության բնագիրն ու արտագրված հինգ օրինակները, ապա մելիքներից յուրաքանչյուրը, իր հետ վերցնելով կանոնադրության մեկ օրինակ, համբուրում է տաճարի սուրբ բեմը և հեռանում<sup>14</sup>:

Ժողովրդի կյանքը կանոնակարգող օրենքների ընդունումից հետո, Եսայի կաթողիկոսն անդրադառնում է մելիքների տրամադրության տակ գտնվող զորագնդերին: Արցախի պաշտպանական համակարգն անխոցելի դարձնելու նպատակով նրա՝ որպէս արցախյան զորքերի գերագույն հրամանատարի հրամանով, մելիքները կարգի են բերում իրենց զորքերը, ամրացնում բերդերն ու ամրոցները, որոնք սղնախներ էին կոչվում. դրանք հին ժամանակներից գոյություն ունեին Արցախում<sup>15</sup>, և դրանց կողքին էլ կառուցվում էին նորերը<sup>16</sup>: Ամրոցների երկիր Արցախը դառնում էր սղնախների երկիր: Ստեղծվում է հայոց սղնախներ (ամրացված վայրեր) պաշտպանական համակարգը: Արցախի հինգ մելիքություններից յուրաքանչյուրն ուներ իր մեծ ու փոքր սղնախները: Դրանց մի

<sup>13</sup> **Բէկնագարեանց Ա.**, Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 210-214:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 214:

<sup>15</sup> Եղիշեն ասում է՝ Հայոց նախարարների գերդաստանների «Կէսքն պաշտպանութում էին ի թանձրախիտ մայրիսն Արձախոյ և այլ ոմանք անդէն ի միջոց աշխարհին բռնացան ի բազում ամրոցացն» (Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 125):

<sup>16</sup> «Սղնախ»-ը պարսկական ծագում ունեցող բառ է, նշանակում է «ամրոց» (տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Դ-Ֆ, Ե., 1976, էջ 1311):

մասը դեռևս վաղ միջնադարից հայտնի բերդ-ամրոցներն էին՝ Գտիչ-Գորոզը, Տոդը, Ջրաբերդը, Խոխանաբերդը, Կաչաղակաբերդը, Շիկաքար-Բերդաքար-Քարագլուխը (հետագայում՝ Շուշիի բերդը) և այլն: Կառուցվեցին նաև նորերը, ինչպես Գյուլիստանը Թարթառ (Տրսու) գետի ափին, Ավետարանոցը Քիրս սարի ստորոտում և այլն: Ընդհանուր հաշվով Արցախում կար 6 տղնախ<sup>17</sup>: Բոլոր տղնախները ղեկավարվում էին մեծ տղնախի կողմից, որի գլուխ էր կանգնած Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը<sup>18</sup>: Արցախյան գործերը ղեկավարվում էին մեծ տղնախի կողմից, որը սկզբնապես Ջրաբերդն էր. հետագայում մեծ տղնախ էր կոչվում Շոշ գյուղի բերդը՝ Քարագլուխը: Արցախյան գործերի գերագույն հրամանատար, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի տեղեկությամբ՝ Արցախի տղնախներում տեղակայված էր 40 հազարանոց զորք, իսկ եթե անհրաժեշտ լիներ, ապա արցախյան զինուժի թվաքանակը կավելանար ևս 40 հազարով<sup>19</sup>: Այս թիվն իրական էր, քանի որ Թիֆլիսի Մինաս արքեպիսկոպոսը խոսում էր նաև արցախյան 100 հազարանոց ռազմուժի մասին<sup>20</sup>:

Ահա այսպես էր նախապատրաստվել Արցախ աշխարհը սպասվող պարսկաթուրքական արշավանքների դեմ:

XVIII դ. առաջին երկու տասնամյակները հայ ազատագրական շարժման նախապատրաստական տարիներն էին, իսկ 1720-ական թվականներից սկսած՝ այն նոր վերելք ապրեց և մտավ զինված պայքարի շրջանը:

Իսրայել Օրու՝ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու քաղաքական ծրագիրը գործողության մեջ դրվեց, որը և ոտքի հանեց մայր հայրենիքի և գաղթօջախների հայրենասեր ու ազատասեր զանգվածներին: Ազատագրական շարժումը համակեց ողջ հայ ժողովրդին, և շարժման կենտրոն դարձավ Արցախը:

Պետք է ասել, որ Ռուսաստանը երբեք օգնության ձեռք չէր մեկնի Անդրկովկասի ժողովուրդներին, այդ թվում՝ հայերին, եթե այդ ձեռնարկի իրականացման մեջ չտեսներ իր պետության շահը: Պետրոս I-ը ցանկանում էր իր տիրապետությունը հաստատել Կասպից ծովի առափնյա շրջաններով անցնող և դեպի Հնդկաստան տանող մետաքսի առևտրական ճանապարհի վրա:

Ավարտելով Հյուսիսային պատերազմը և 1721 թ. օգոստոսի 30-ին կնքելով Նիշտադի նպաստավոր պայմանագիրը՝ նա, 1722 թ. հուլիսին, ռուսական 44 հազարանոց բանակի գլուխն անցած, սկսեց իր պարսկական կամ կասպիական արշավանքը: Հասնելով Աստրախան՝ նա իշխան Բորիս Տուրկեստանովին (մահ. 1735 թ.)<sup>21</sup> ուղարկում է վրաց թագավոր Վախթանգի VI-ի (1675-1737)<sup>22</sup> մոտ՝ վերջինիս հրավիրելով միանալ ռուսական զորքերին<sup>23</sup>: Պետրոսը առաջարկում էր հայ-վրացական զորքերը փոխադրել Կասպից

<sup>17</sup> Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Ադուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 69-70:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>19</sup> Эзов Г., նշվ. աշխ., N 213, էջ 333:

<sup>20</sup> Նույն տեղում, N 217, էջ 339-340:

<sup>21</sup> АРО, т. II, ч. II, էջ 7, 343:

<sup>22</sup> Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. Сборник документов под. ред. А. Иоаннисяна, т. III (այսուհետև՝ АРО, т. III), Е., 1978, с. 357.

<sup>23</sup> Эзов Г., նշվ. աշխ., էջ LIII:

ծովի առափնյա շրջանները Դերբենդի և Բաքվի միջև գտնվող որևէ վայր՝ ռուսական զորքերին միանալու համար:

1722 թ. հուլիսին ռուսական զորքերը Աստրախանից ցամաքով և ծովով շարժվեցին դեպի Դերբենդ և օգոստոսի 23-ին առանց կովի գրավեցին այն: Պետրոս I-ի արշավանքն ուներ ինչպես բացահայտ, այնպես էլ թաքուն նպատակներ:

Ռուսական կողմը պաշտոնապես հայտարարել էր, թե արշավանքը ձեռնարկում է միմիայն Պարսկաստանին ապստամբներից պաշտպանելու նպատակով: Այս ձևով փորձում էր շահել պարսիկների համակրանքը: Բացի դրանից, Պետրոս I-ը ուներ երկու, եթե ոչ ավելի, թաքնված նպատակներ. առաջին՝ անվտանգ դարձնել Կասպից ծովով կատարվող ռուսական առևտուրը և երկրորդ՝ կասեցնել Պարսկաստանի նկատմամբ թուրքական ագրեսիան: Լեզգիները հարձակվել էին Շամախիի վրա, կողոպտել և կոտորել ռուս վաճառականներին: Ուստի պետք էր պատժել նրանց և անվտանգ դարձնել Կասպից ծովով կատարվող ռուսական առևտուրը:

Մյուս կողմից, Պետրոս I-ին քաջ հայտնի էր, որ Հուսեյն I-ի օրոք, ներքին խռովությունների հետևանքով, Պարսկաստանը դեպի անկում էր գնում: Իսկ թուրքական սուլթանն իրեն համարում էր պարսկական կործանվող գահի օրինական ժառանգորդը: Օգտվելով Պարսկաստանի ներքին խռովություններից ու թուլացումից՝ Օսմանյան կայսրությունը ձգտում էր գրավել ոչ միայն նրա տիրապետության տակ գտնվող Անդրկովկասյան երկրամասերը, այլև՝ բուն Պարսկաստանը: Եր նպատակին հասնելու համար սուլթանը հրահրրում և կազմակերպում էր Դադաստանի ավատատերերի հարձակումները Անդրկովկասի վրա: Իսկ Ռուսաստանի շահերն էլ պահանջում էին թուրքերին թույլ չտալ նվաճելու Անդրկովկասն ու Պարսկաստանը:

Տեղեկանալով, որ Պետրոս I-ը սկսել է իր կասպիական արշավանքը՝ Վախթանգ VI-ը «...իսկոյն հրաման եհան զօրս զումարել և վաղվաղակի ժողովեալ զբազմութիւն զօրաց ազգացն վրաց և հայոց և ոչ ոք եթող զոր ոչ եբարձ ընդ իւր...»<sup>24</sup>: Արցախյան զորքերը, որոնց թիվը 12 հազարից ավելի էր, գտնվում էին չորս երիտասարդ հարյուրապետների (յուզբաշիների)՝ Ավանի, Շիրվանի, Շահենի և Սարուխանի հրամանի ներքո: Մենք էլ «...յարդարեցաք զնոսա (զորքը – Հ.-Ջ. Ս.) ըստ օրինի զօրաց իշխանաց... և այսպէս բովանդակեալ զամենայն իբրև զտասն հազար արս ընտիր և սպառազէս ընդ որոց և զդասս քահանայից և պաշտօնէից մերոց առեալ մեծաւ ճոխութեամբ և խնջոյիւք համարելով նոր նորոգեալ զիշխանութիւն հայոց, և գնացեալ

<sup>24</sup> Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Ադուանից, համառոտագրեալ ի սրբազնակատար կայթուղիկոսէն Ադուանից ի Տէր Եսայեայ Հասան-Ջալալեանց. ի թուականին Հայոց ՌՃԿ, իսկ ի թուականին Տեառն մերոյ Փրկչին Յիսուսի 1711, Շուշի, 1839, էջ 56:

իջաք մերձ ի քաղաքն Գանջայ Չոլակ անուն վայրն յաւուրս Գ: Քանզի և թագաւորն Վահիտանկ բնակեալ էր յայն կողմ քաղաքին...»<sup>25</sup>, - գրում է Եսայի Հասան-Ջալալյանը:

Սակայն Պետրոս I-ի ռազմական գործողությունները նախատեսված պլանով չընթացան: Կայսրը, հանդիպելով ներքին և արտա- քին լուրջ դժվարությունների, ստիպված եղավ նոր պայմաններին համապատասխան վերանայել և անսպասելի փոփոխություններ մտցնել 1722 թ. ռազմական գործողություններում: Տվյալ ժամանակահատվածում խիստ աննպաստ էին դասավորվել միջազգային հարաբերությունները Ռուսաստանի համար: Գլուխ էին բարձրացրել Օսմանյան Թուրքիան և նրա թիկունքում կանգնած Անգլիան ու Ֆրանսիան: Ռուսաստանի դեմ եռանդուն գործողություններ էին սկսել Թուրքիայի վասալներ Ղրիմի խանն ու Դաղստանի ավատատերերը:

Ստեղծված աննպաստ իրավիճակում Պետրոս I-ը Դերբենդը գրավելուց անմիջապես հետո այնտեղ ռազմական խորհուրդ է հրավիրում, որը որոշում է առայժմ բավարարվել Կասպիականի ափերի նվաճումով, ամրանալ գրաված վայրերում, լավ նախապատրաստվել և 1723 թ. շարունակել ու ավարտին հասցնել արշավանքը: Դերբենդում թողնելով գեներալ Միխայիլ Մատյուշկինի (1676-1737)<sup>26</sup> զորամասը՝ 1722 թ. հոկտեմբերի 4-ին Պետրոս I-ը վերադառնում է Աստրախան: Դերբենդում կառուցվում է Սուրբ Խաչ բերդը, որտեղ նույնպես կայազոր է թողնվում: Կայսրը Մատյուշկինին հրամայել էր ռազմական հետագա գործողությունների ժամանակ գրավել միայն մերձծովյան շրջանները: Հայ-վրացական զորքերին միանալու մասին որևէ հրահանգ չկար: Բանից անտեղյակ հայ-վրացական հրամանատարությունը Գանձակին մերձակա Չոլակում սպասում էր բաղձալի պահին: Պետրոսը մեծ նշանակություն էր տալիս Բաքվի գրավմանը: Գեներալ Մատյուշկինը 1723 թ. հուլիսի 28-ին գրավում է Բաքուն, գնդապետ Շիպովը 1722 թ. դեկտեմբերին՝ Ռեշտը, իսկ 1723 թ. աշնանը փոխգնդապետ Ջինբուլադովը՝ Սալիանը: Այսպիսով Կասպիականի ափերը անցնում են ռուսական զորքերի ձեռքը:

Իսկ հայ-վրացական զինված ուժերը Չոլակում ապարդյուն սպասում էին ռուսական զորքերին: Հայ-վրացական ապստամբական ուժերը գրեթե մեկ ամիս<sup>27</sup> Չոլակում սպասելուց հետո 1722 թ. աշնան վերջին ստիպված վերադառնում են իրենց տեղերը. «...մեք անյոյս մնացեալ առաջնոյ ասացեալ յուսոյն դարձաք իւրաքանչիւր ի տեղիս մեր և ամրացաք ի լերինս ուր և դժուարին էր»<sup>28</sup>: Այսպիսով, հայ ազգային գործիչների ազատագրական ձգտումներն օտար երկրների միջոցով չիրականացան: Սակայն Կասպից ծովի արևմրտյան ափերին ռուսական

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>26</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник документов под ред. А. Иоаннисяна, т. II, ч. II (այսուհետև՝ АРО, т. II, ч. II), Е., 1967, с. 344.

<sup>27</sup> Եսայի Հասան-Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 60:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 36:



տիրապետության հաստատումով, որը միջազգային իրավունքի առումով ամրագրվեց Ս. Պետերբուրգի 1723 թ. սեպտեմբերի 12-ի ռուս-պարսկական պայմանագրով<sup>29</sup>, Ռուսաստանն էլ ավելի մոտեցավ Հայաստանին. ռուսական ներկայությունը դարձավ ավելի շոշափելի: Ուստի հայ գործիչները ազատագրական պայքարում շարունակեցին պահպանել քրիստոնյա Ռուսաստանի հետ զինակցելու հնարավորությունը և այդ ակնկալությամբ էլ նոր խնդրագրեր էին ուղարկում ցարական արքունիք:

Պետրոս I-ի ձախողված պարսկական արշավանքից հետո ապրստամբած հայերն ու վրացիները հայտնվեցին խիստ աննպաստ իրավիճակում: Շահ Թահմասպ II-ը (1722-1732)<sup>30</sup>, Վախթանգ VI-ին մեղադրելով պետական դավաճանության մեջ, նրան գահընկեց հայտարարեց: Թուրքական զորքերը ներխուժեցին Վրաստան: Գահից զրկված Վախթանգն իրեն հավատարիմ զինված ուժերով ապաստանեց լեռներում, ապա 1200 հոգով անցավ Ռուսաստան և իր մահկանացուն կնքեց Աստրախանում:

Հայկական ապստամբ ուժերը գրկվելով իրենց դաշնակցից՝ Վրաստանից, ստիպված էին միայնակ շարունակել պայքարը: Այն գլխավորելու ծանր ու դժվարին գործը ստանձնել էր Արցախի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը: Վերադառնալով Արցախ՝ հայկական զինված ուժերը ազատագրական կռիվների միջոցով երկրամասից դուրս քշեցին պարսկական վարչակազմին և գորամասերին: 1722 թ. վերջին արդեն ամբողջ Արցախն ազատագրված էր պարսկական իշխանության մնացուկներից: Տեղական կառավարումն անցավ հայերի ձեռքը, վերացան պարսկական կառավարման ու հարկային համակարգերը: Ոչնչացվեցին հարկային բոլոր հին ցուցակները, ժողովուրդը ազատվեց դարերի վեր սրբագործված բռնություններից ու կամայականություններից: Աստիճանաբար մտցվում էին կառավարման, հարկահավաքման միանգամայն նոր ձևեր: Սղնախներում ամրացած հայ զինվորականությունը ապահովում էր Արցախ-Ղարաբաղի անկախությունը: Ծուրջ 14 տարի՝ 1722-1736 թթ., Արցախի գավառներն այլևս հարկ չէին վճարում պարսիկ կամ թուրք բռնակալներին և ունեին անկախ կարգավիճակ<sup>31</sup>: Արցախի հայկական իշխանությունը գտնվում էր տեղի հինգ մելիքների ձեռքում, որոնց մեջ գերագահ էին Հասան-Ջալալյանները<sup>32</sup>: Մելիքների գործունեությունը համակարգում էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը:

<sup>29</sup> Полное собрание законов Российской империи (այսուհետև՝ ПСЗРИ), т. VII, СПб., 1830, N 4298.

<sup>30</sup> Բայբության Վ., Իրանի պատմություն, Ե., 2005, էջ 361:

<sup>31</sup> Ուլուբաբյան Բ, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 141, Գարապետյան Բ., Գյուլիստան նամե, Մեծ Կուանք, գիրք I, Ե., 2005, էջ 145, Այվազյան Ա., Արցախի հայկական բանակի հրազենը 1720-ական թվականներին (Լուսակն, 2010, N 2, էջ 8), նույնի՝ Ժողովրդագրական իրավիճակը Ղարաբաղում 1710-1720-ական թվականներին (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, N 1-2, էջ 60):

<sup>32</sup> Բեկնագարեանց Ա., նշվ. աշխ., էջ 210-214:

Պարսկաստանի թուլացումն ու մասնատումը, Ռուսաստանի անսքող հետաքրքրություններն Անդրկովկասի նկատմամբ իրենց վրա բևեռեցին Օսմանյան Թուրքիայի ուշադրությունը: Թուրքիան ուշի ուշով հետևում էր տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին և պատրաստվում Անդրկովկասն ու Ատրպատականը գրավելու իր հին ծրագրերի իրականացմանը: Անշուշտ, թուրքական վտանգի դեմ պայքարի խնդիրը շատ ավելի բարդ էր ու դժվար լուծելի և անպայման պահանջում էր Ռուսաստանի հովանավորությունը: Նոր իրադրությունը Ռուսաստանին ստիպում էր դիմել համարժեք քայլերի: Անհրաժեշտ էր ապահովել տեղական բնակչության՝ հատկապես հայերի դաշնակցությունը: Ահա այս նպատակն էր հետապնդում Պետրոս I-ի անձնական ներկայացուցիչ Բվան Կարապետի (Հովհաննես Շիրվանյան) բանագնացությունը Հայաստան: Բվան Կարապետը Ս. Պետերբուրգում բնակվող մեծահարուստ վաճառական էր, ծնունդով արցախցի<sup>33</sup>, որին անձամբ ճանաչում էր կայսրը, և պատահական չէ, որ նրան էր վստահել այս կարևոր առաքելությունը: 1723 թ. հունիսի 3-ին, ռազմական ու դիվանագիտական նշանավոր գործիչների ներկայությամբ, ցարն ընդունում է նրան և հանձնում «Պատվական Հայոց ասկին, որն որ Պարսից երկրումն էք բնակեալ» խորագիրը կրող հրովարտակ-նամակն ու մի առանձին հուշագիր՝ ի պատասխան այն խնդրագրերի, որ իրեն էր ուղարկել Եսայի Հասան-Չալայանը: Կայսրը հայերին հուսադրում էր, թե ինքն անպայման օգնելու է նրանց, միայն թե չթուլացնեն դիմադրությունը, չկորցնեն հույսը և համբերեն այնքան, մինչև որ ինքն ի վիճակի կլինի նրանց օգնության գնալու հարկ եղած և հզոր միջոցներով<sup>34</sup>:

1724 թ. հունվարի 1-ին Բվան Կարապետն արդեն Արցախում էր<sup>35</sup>: Նա ներկայանում է Եսայի կաթողիկոսին, որի հրամանով էլ Գանձասարում է հավաքվում արցախյան զորքերից կազմված 12 հազարանոց մի զորաբանակ՝ իր հրամանատարներով, որոնց մեջ գլխավորներն էին Ավանն ու Միրզան: Կաթողիկոսն ու մելիքներն Բվան Կարապետի բերած լուրը ուրախությամբ ընդունեցին և ութ օր տոնախմբություն էին անում ու «Ղարաբաղյան նահանգից մինչև 40.000 հայկական զորք հավաքվեց, որից 30.000 հեծյալ և 10.000 հետևակ, որոնց գլխավորում էին երկու հարյուրապետները՝ Ավանն ու Միրզան, իսկ գերագույն հրամանատարն էր Եսայի Հասան-Չալայանը»<sup>36</sup>:

Թեև Ռուսաստանն օգնության հասնելու խոստումներ էր տալիս հայերին ու հուսադրում նրանց, սակայն, մյուս կողմից, առաջնորդվելով իր քաղաքական շահախնդրություններով, շտապում է Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքել: 1724 թ. հունիսի 12-ին Կոստանդնուպոլսում Ռուսաստանը Թուրքիայի

<sup>33</sup> Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, էջ 24-25:

<sup>34</sup> Эсов Г., նշվ. աշխ., N 235, էջ 365-366:

<sup>35</sup> АРО, т. II, ч. I, с. 68.

<sup>36</sup> АРО, т. II, ч. II, с. 204.

հետ կնքում է իր համար չափազանց նպաստավոր, հայերի համար նույնքան աննպաստ մի պայմանագիր, որի համաձայն, Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի տիրապետությունը Անդրկովկասում, փոխարենն իր ենթակայության տակ էին անցնում Կասպից ծովի առափնյա շրջանները՝ Դերբենդից մինչև Մազանդարան: Թուրքիան տեր դարձավ Վրաստանին, Հայաստանին, և Պարսկաստանի ամբողջ հյուսիս-արևմտյան մասին<sup>37</sup>: 1724 թ. նոյեմբերի 10-ին, Պետրոս I-ը հայերին հղում է, մեղմ ասած, զուտ սեփական շահերից բխող մի հրովարտակ, որով նա հայ ժողովրդին առնում է իր հովանավորության տակ<sup>38</sup>:

Ռուս-թուրքական պայմանագրի կնքումից անմիջապես հետո թուրքերն անցնում են լայնածավալ հարձակման: Ավարի ու ավերի ենթարկելով իրենց ճանապարհին հանդիպած ամեն ինչ՝ նրանք հասնում են Սյունիք և պաշարում Ղափանը: Ղափանցիները օգնության խնդրանքով դիմում են Արցախի սղնախների հրամանատարությանը: Եսայի Հասան-Ջալալյանի հրամանով՝ 2000 մարտիկներ Ավան հարյուրապետի գլխավորությամբ օգնության են գնում Ղափանցիներին<sup>39</sup>:

Թուրքերն առանց լուրջ դիմադրության մեկը մյուսի հետևից գրավելով ու ասպատակելով Երևանը, Լոռին, Բորչալուն, Ղազախը, Շամշադինը, Նախիջևանը, Սյունիքը և Թավրիզը՝ ի վերջո հասնում են Արցախի սահմաններին: Նրանք շատ լավ հասկանում էին, որ դեպի Կասպից ծով տանող ճանապարհին իրենց առջև ծառայած մեծ խոչընդոտն Արցախ աշխարհն է իր պաշտպանական հզոր համակարգով՝ Հայոց սղնախներով: Դիմադրությունը բացառելու համար թուրքական բանակի հրամանատար Արիֆ Ահմեդ փաշան հորդորում է Ամենայն հայոց կաթողիկոս Աստվածատուր I Համադանցուն (1715-1725)<sup>40</sup> համոզել Արցախի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին, որպեսզի Արցախի հայերը զենքը վայր դնեն և հանձնվեն թուրքերին: Ամենայն հայոց կաթողիկոսը տեղի է տալիս թուրք փաշայի հորդորներին<sup>41</sup>, սակայն չի կատարում Աստվածատուր Համադանցու հանձնարարությունը: Ընդհակառակը, անմիջապես գործի անցնելով՝ սղնախներն ավելի է ամրացնում՝ քաջալերելով արցախահայությանը:

1726 թ. հունիսի 10-ին օսմանյան 40 հազարանոց բանակը Սարը-Մուստաֆա փաշայի գլխավորությամբ հարձակվեց Արցախի վրա՝ առաջին հարվածը հասցնելով ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ղազանչի և Չանկաթաղ գյուղերին: Թուրք ասկյարները կոտորեցին անզեն բնակիչներին, թալանեցին տները: Սղնախների գորքերը հունիսի 10-ին անցան հակահարձակման: Խաչեն գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը ծանր պարտություն

<sup>37</sup> ПСЗРП, с. 303-309.

<sup>38</sup> АРО, т. II, ч. II., N 293, с. 208.

<sup>39</sup> Նույն տեղում, էջ LVII:

<sup>40</sup> Դանիելեան Է., Գանձասարի պատմություն, Ե., 2005, էջ 223:

<sup>41</sup> АРО, т. II, ч. II, N 285, с. 197-198.

կրեցին և, թողնելով ավարն ու գերիներին և մեծաթիվ զոհեր, փախան: Այս մասին Եսայի Հասան-Չալալյանը հայտնել է վրաց թագավոր Վախթանգ VI-ին 1726 թ հունիսի 15-ին գրած նամակում. «...յունիս ամսոյս Ժ-ումն (10-ին – Հ-Ձ. Ս.) Գանջու դոշունն եկին Խաչինու վերայ... Ղազանչի, Ղապարթու, Չանկաթաղ անուն գեղարանքն չափմիշ արին՝ կոտորեցին, եսիր, ապրանքն տարան: Մեք էլ տուս եկինք նոցա վերայ, Աստուծով, կոխեցինք, կոտորեցինք՝ եսիրն, ապրանքն թափեցինք, փախցրինք...»<sup>42</sup>:

Սղնախներում մեծ ոգևորություն առաջացրեց քրիստոս Չալաբու՝ Պետերբուրգից բերած՝ կայսրուհի Եկատերինա I-ի (1725-1727) հրովարտակը, որով վերջինս շուտափույթ օգնություն էր խոստանում: 1727 թ. փետրվարի 28-ին Եսայի Հասան-Չալալյանը մի բազմամարդ պատվիրակություն է ուղարկում Դերբենդ, ֆելդմարշալ Վասիլի Դոլգորուկովի (1667-1746)<sup>43</sup> մոտ՝ ստանալու կայսրուհու խոստացած օգնությունը<sup>44</sup>: Իշխանը պատասխանում է, որ նրանց զորք հասկացնելու հրաման չունի: Ոչ մի օգնություն չստանալով՝ պատվիրակության անդամներից յուզբաշի (հարյուրապետ) Բադին և քրիստոս (տանուտեր) Չալաբին մեկնում են Պետերբուրգ, որտեղ, օգնություն ստանալու խնդրանքով, գրություն են ներկայացնում Եկատերինա I-ին հաջորդած Պետրոս II-ի (1727-1729) անունով<sup>45</sup>:

1727 թ. մայիսի 11-ին մերձկասպյան ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Դոլգորուկովն իր կառավարությանը հղած զեկույցում զարմանք է հայտնում, թե սղնախների հայերն ինչպես են կարողանում դիմանալ թուրքական հզոր բանակի հարվածներին. «...պետք է զարմանալ, թե հայերն ինչպես են դիմանում, երբ նրանք հարկադրված են մեն-մենակ պատերազմել թուրքական բանակների դեմ...մարդկային մտքից վեր է, թե ինչպես են դիմանում հայերը այդքան զորեղ թշնամու առաջ»<sup>46</sup>:

Ռուսաստանի գերագույն գաղտնի խորհրդի՝ Դոլգորուկովին հղած 1727 թ. օգոստոսի 15-ի հրամանագրից երևում է, որ հայերին օգնելու հարցը ամբողջապես կախվածության մեջ էր դրվել ռուսական կայսրության շահերից: Այդ հրամանագրում մասավորապես ասվում է. «Դուք պետք է ի կատարումն մեր նախկին հրամանագրերի այնտեղ, որքանով հնարավոր է, մեր զորքերից հավաքեք և մտցնեք Պարսկաստան, որպեսզի դրանով այնտեղ գործողությունների տեսք տաք և հայերին ոգեշնչեք մեր հանդեպ եղած հույսով... Ելնելով իրավիճակից, ինչ որ մեզ օգտակար է և համապատասխանում է մեր շահերին՝ լավագույն ձևով արեք... Եվ ներկայումս հայերին անհրաժեշտ է ամեն կերպ ամրացնել, որպեսզի նրանք թուրքերի դեմ ամուր կանգնեն և չենթարկվեն, նրանց հույս ներշնչող տեսարաններ սարքեք ցույց տալով

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 285:

<sup>43</sup> АРО, т. III, с. 361.

<sup>44</sup> Эзов Г., նշվ. աշխ., N 290, շ3 435-436: АРО, т. II, ч. II, N 352, с. 292.

<sup>45</sup> Эзов Г., նշվ. աշխ., N 293, շ3 439-440: АРО, т. II, ч. II, N 356, с. 295-296.

<sup>46</sup> Эзов Г., նշվ. աշխ., N 292, շ3 437-439: АРО, т. II, ч. II, N 355, с. 294.

թուրքերի թուլությունը, և որ շուտով կարող է առիթ ներկայանալ մեր կողմից ուժեղ օգնություն ստանալու և համատեղ գործելու համար... մենք նման հուսադրումով հայերին, որոնց դուք այստեղ էիք ուղարկել, հետ կուղարկենք ձեր մոտ, իսկ դուք էլ նրանց ուղարկեք իրենց հայրենակիցների մոտ»<sup>47</sup>:

Ուղղամիտ արցախցիները, նման խարդավանքներից անտեղյակ, հերոսաբար կովում էին թուրքական կանոնավոր զորքերի դեմ:

Օսմանյան հրամանատարությունը, համոզված լինելով, որ զենքի ուժով հնարավոր չէ գրավել Արցախը, փորձեց կաշառել Եսայի Հասան-Ջալալյանին<sup>48</sup>: Մակայն հայրենիքի նվիրյալ կաթողիկոսը կըտրականապես մերժեց թուրքերին: Օսմանյան Թուրքիան, որը գրավել էր Իրանական Ատրպատականը, ողջ Անդրկովկասը, չկարողացավ ծնկի բերել արցախցիներին<sup>49</sup>:

Կարծում ենք՝ տեղին է ընդգծել չափազանց կարևոր այն հանգամանքը, որ թեպետ ռուսները դրժեցին հայերին օգնելու իրենց խոստումը, սակայն հայերը անուրանալի աջակցություն ցուցաբերեցին նրանց: Թուրքական բանակի դեմ հայկական հերոսամարտերը Թուրքիային թույլ չտվեցին Կասպից ծովի առափնյա տարածքները խլել Ռուսաստանից<sup>50</sup>:

Եսայի Հասան-Ջալալյանի մահը (1728 թ.) ծանր կորուստ էր հայ ժողովրդի համար: Բարձր գնահատելով հայրենանվեր կաթողիկոսի գործունեությունը՝ Լեոն գրել է. «Իր այս պաշտոնին Հասան-Ջալալյան կրոնապետը վերաբերվել էր մի անդրդվելի շիտակությամբ և հավատարմությամբ, որին բոլորովին չէր համապատասխանում ռուսական ցարի երկդիմի քաղաքականությունը... Այս մի շատ ծանր հարված էր, որ կրում էր Հայոց ազատագրական գործը, զրկվելով Եսայու պես մի անխոնջ կազմակերպիչ ուժից և ոգևորված գաղափարախոսից»<sup>51</sup>: Եսայի Հասան-Ջալալյանը ազգային-ազատագրական շարժմանը հաղորդեց առավել գործնական ընթացք: Գանձասարի կաթողիկոս ձեռնադրվելով, այսինքն՝ դառնալով Հայոց արևելից կողմանց հոգևոր առաջնորդ, նա իր ազդեցությունն ու իշխանությունը ծառայեցրեց մելիքների ուժերը համախմբելու, պարսկական ու օսմանյան բռնատիրությանը դիմակայելու համար: Իսրայել Օրու հետ միասին ձեռնամուխ եղավ հայոց ազատագրության ծրագրի իրագործմանը:

Եսայի Հասան-Ջալալյանն իր մեջ խտացրել էր երեք՝ կաթողիկոսի, զորավարի և պատմիչի կերպարները: Եթե կաթողիկոս Եսային Գանձասարի հոչակավոր վանքում աղոթք էր բարձրացնում առ Աստված հայ ժողովրդի փրկության համար, իսկ զորավարը արցախյան 40 հազարանոց ինքնապաշտպանական բանակի հաղթական

<sup>47</sup> Զօբ Գ., նշվ. աշխ., N 294, շ3 440-441: APO, տ. II, Կ. II, N 357, Կ. 297.

<sup>48</sup> Զօբ Գ., նշվ. աշխ., էջ 327:

<sup>49</sup> Կարապետյան Բ., նշվ. աշխ., էջ 177-178:

<sup>50</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 64:

<sup>51</sup> Լեոն, նշվ. աշխ., էջ 172-173:

առաջնորդն էր, ապա պատմիչը՝ որպես դեպքերի գլխավոր մասնակից ու ակնատես, ամենայն մանրամասնությամբ գրի էր առնում բոլոր դեպքերն ու իրադարձությունները՝ գալիք սերունդներին հանձնելով ժամանակի կարևոր անցքերը: Նրա մի ձեռքում փետրագրիչն էր, մյուսում՝ սուրը, իսկ կուրծքը զարդարում էր կաթողիկոսական խաչը: Նա ապացուցեց, որ Առանշահիկ Հասան-Չալալյանները, սկսած տոհմի փառավոր նախապապից՝ Հասան-Չալալ-Դուլայից, հայ ժողովրդի ճակատագրի և հայոց պետականության կերտման գործում անուրանալի դերակատարություն են ունեցել:

Եսայի Հասան-Չալալյանի կյանքն ու գործունեությունը եղել և այսօր էլ պատմական ուսումնասիրության նյութ են: Բաֆֆին, Լեոն, Բ. Ուլուբաբյանը, Ա. Այվազյանը և ուրիշներ իրենց աշխատություններում այս կամ այն չափով բացահայտել են նրա տեղն ու դերը XVII-XVIII դդ. հայ ազատագրական շարժման և հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ:

Իբրև պատմիչ՝ Եսայի կաթողիկոսը կարևոր տեղ է գրավում հայ մեծ հեղինակների շարքում, բացառիկ են XVII-XVIII դ. պատմությունը ներկայացնող նրա աշխատությունը՝ «Համառոտ պատմություն Աղվանից երկրի» երկը, և Խաչենի տարածքի մի շարք եկեղեցիների ու խաչարձանների բազմաթիվ արձանագրություններ պարունակող տետրը: «Համառոտ պատմություն Աղվանից երկրի» աշխատությունը լույս է տեսել երկու անգամ. առաջին անգամ՝ Շուշում, 1839 թ. Եսայու տոհմակից Բադդասար մետրոպոլիտ Հասան-Չալալյանի նախաձեռնությամբ, «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից ի թուականին Հայոց 1160, իսկ ի թուականին տեառն մերոյ Փրկչին Հիսուսի 1711» վերնագրով, երկրորդ անգամ՝ Երուսաղեմում, 1868 թ., «Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի» վերնագրով:

Բաֆֆին գրում է. «Այդ երևելի հոգևորականը, որ իր ժամանակի անցքերի ոչ միայն ակնատեսը, այլ գլխավոր գործիչն էր, օրագրության ձևով գրեց բոլոր անցքերի մանրամասն և ընդարձակ պատմությունը: 1839 թվին Բադդասար միտրոպոլիտը Շուշի քաղաքում տպագրել տվեց այդ պատմությունը, բայց սաստիկ համառոտած և անխնա կերպով կրճատած: Մենք այժմ ավելորդ ենք համարում բացատրել, թե ի՞նչ նպատակով է կատարել հանգուցյալ միտրոպոլիտը այդ գրականական սպանությունը, միայն այսքանը կասենք, որ Եսայի կաթողիկոսի պատմության իսկականը շատ ընդարձակ է եղել, ինչպես երևում է այդ մեր ձեռքը հասած մի գրչագիր օրինակից, որը դժբախտաբար կիսով չափ փտած է: Ցանկալի կլիներ, որ գտնվեր այդ աշխատության ամբողջը, և դա առատ նյութ կտար մեր նոր պատմությանը»<sup>52</sup>:

Մեծ գրողի և պատմաբանի այս եզրակացության համար լրացուցիչ հիմք կարող են ծառայել «Համառոտ պատմության» այն հատվածները, որոնցում խոստումներ

<sup>52</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IX, Ե., 1987, էջ 435-436:

կան, թե այսինչ կամ այնինչ փաստի մասին խոսք է լինելու հետագայում, բայց մենք այդ խոսքը չենք տեսնում: Օրինակ՝ Եսային գրում է, որ ինքը հավաքում է Արցախի 10 հազարանոց զորքը և գնում է միավորվելու վրաց Վախթանգ VI թագավորի բանակին և ասում է. «յորոց պատմութիւնքն յառաջիկայսդ յաճախագոյնս գտնես»: Բայց ոչ մի նման պատմության չենք հանդիպում:

Եսայի Հասան-Ջալալյանի պատմության ամբողջական բնագիրը չի գտնվել, բայց այս պատատիկն անգամ հայոց պատմագիտության համար անառարկելի արժեք է ներկայացնում: Մա գնահատականն է մեծանուն Լեոյի, որը հենց պատմության այդ պատատիկից քաղել է ընդարձակ հատվածներ՝ ցույց տալու համար, թե ինչպես էր կեղեքվում հայ ժողովուրդը, և թե ինչպես Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի գլխավորությամբ ոտքի էլավ՝ թոթափելու օտարի լուծը: Բացի այդ, Լեոն կարևորում է նաև մի այլ հանգամանք. «Եսայի կաթողիկոսը մի վկայություն է, որ Ղարաբաղի լեռներում էլ, չնայած նրանց դժվարամատչելիությանը, կարելի է հայկական աղբյուրներով ստանալ կանոնավոր և բարեկարգ մի դաստիարակություն: Ինչպես երևում է, Գանձասարն ուներ ոչ միայն լավ մատենադարան, այլև կարող ուսուցիչներ»<sup>53</sup>:

Եսայի Հասան-Ջալալյանն առաջինն է ընդօրինակել (1718 թ.) Գանձասարի վիմագրերն ու այդպիսով դրանք՝ իբրև աղբյուրագիտական նյութ, դրել գիտական շրջանառության մեջ: Գանձասարի, Խաթրավանքի, Խութավանքի (Դադիվանքի) և բազմաթիվ այլ արձանագրություններ ներկայացնելով՝ նա այդ արձանագրությունների հիման վրա տալիս է նաև Խաչենի իշխանական ճյուղերից մեկի՝ Ծարի իշխանական տան տոհմաբանությունը: Եսայի կաթողիկոսի սույն ձեռագիրը հետագոտողներից շատերն են տեսել և օգտագործել: Այդ մասին պահպանվել են նրանց խոստովանությունները: Մակայն հայտնի չէ, թե այժմ որտեղ է գտնվում այդ ձեռագիրը, կամ արդյո՞ք այն պահպանվում է: Կարևոր է, համենայն դեպս, որ պահպանվել են ձեռագրի երկու ընդօրինակությունները՝ կատարված բավական բարեխղճորեն. մեկը 1809 թ. Եսայու տոհմակից, 1830-1854 թթ. Արցախի մետրոպոլիտ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի ձեռքով. «Ի ՌՄՄԸ (1809) թուին հայոց ի Սուրբ Աթոռս Գանձասարու վերստին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ ձեռամբ Բաղդասար վարդապետի Ջալալեան, և որդւոյ Դանիէլ հազարապետին Տեառն Խաչենոյ»<sup>54</sup>, մյուսը՝ 1822 թ. Էջմիածնի գրագիր Հովհաննես Դրիմեցու ձեռքով. «Յամի տեառն 1822 յամսեանն յուլիսի մէկին ընդ սրբազնակատար Եփրեմ կաթողիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի զբազում վանորէից, եկեղեցաց և խաչից հնագոյն արձանաց օրինակս խողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից ի թուականութեան հայոց ՌՃԿԷ (1718), զոր և օրինակեցի կրկին իմով ձեռամբ: Խ. ծ. Յոհաննէս եպիսկոպոս երբեմն գրագիր Սրբոյ Էջմիածնի»<sup>55</sup>:

<sup>53</sup> Լեո, նշվ. աշխ., հ. III, գ. II, Ե., 1973, էջ 446:

<sup>54</sup> Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 7821, թ. 18ա:

<sup>55</sup> Նույն տեղում, ձեռ. N 9923, թ. 2ա:

*Եսայի հայրապետի ընդօրինակած արձանագրությունները 1842 թ. Էջմիածնում հրատարակել է Հովհաննես Եպիսկոպոս Շահխաթունյանցը<sup>56</sup>: Տպագրված ընդօրինակությունների համեմատությունն անկա բնագրերի (վիմական արձանագրությունների) հետ՝ ցույց է տալիս, թե Արցախի պատմիչն ու հոգևոր վեհապետը որքան ճիշտ ու անթերի է արտագրել արձանագրությունները:*

**ПОЛИТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ И ИСТОРИОГРАФИЧЕСКОЕ  
НАСЛЕДИЕ КАТОЛИКОСА ЕСАИ АСАН-ДЖАЛАЛЯНА**

АСАН-ДЖАЛАЛЯН С. Р.

**Резюме**

Есаи Асан-Джалалян, будучи в 1701 г. помазан католикосом Арцаха, коренным образом изменил военно-политическую ситуацию в Арцахе. Эпицентром освободительного движения стал Гандзасар, в котором разрабатывались и обсуждались дипломатические проекты и военные действия.

Как историк Есаи Асан-Джалалян занимает видное место в ряду крупных историографов. Исключительным по значимости трудом является его сочинение “Краткая история Агванкского края”, посвященная событиям XVII-XVIII вв., а также сборник надписей ряда церквей и многочисленных хачкаров на территории Хачена.

---

<sup>56</sup> **Եպիսկոպոս Շահխաթունեանց Յ.**, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. II, Էջմիածին, 1842, էջ 356-379:*